



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

29.06.2017թ.

- 10:00 Բաժնետերերի գրանցում, նյութերի և քվեաթերթիկների բաժանում
- 11:00 Ժողովի բացում, ողջույնի խոսք  
Ելույթ – Տնօրենների խորհրդի նախագահ – Սպարտակ Թևոսյան  
(ԱՀ ֆինանսների նախարար)
- 11:05 Ջեկույց ժողովի քվորումի վերաբերյալ:  
Ջեկուցող – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ – Ժան Հովհաննիսյան  
(Ընկերության ֆինանսական տնօրեն)
- 11:10 Ժողովի օրակարգի ներկայացում  
Ներկայացում – Կորպորատիվ քարտուղար – Սերյոժա Մնացականյան  
(Ընկերության իրավաբան)
- 11:15 Տարեկան հաշվետվության ներկայացում  
Ելույթ - գլխավոր տնօրեն – Վահրամ Բեգլարյան
- 11:30 Տարեկան արտադրա-տեխնիկական հաշվետվության ներկայացում  
Ելույթ – տեխնիկական տնօրեն - Արմեն Գասպարյան
- 11:40 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացում  
Ելույթ – ֆինանսական տնօրեն – Ժան Հովհաննիսյան
- 11:45 2016թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտի  
եզրակացության ներկայացում  
Ներկայացում – հաշվապահ - Գեղամ Սարգսյան
- 11:50 Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավա-  
տության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացում  
Ներկայացում - գլխավոր հաշվապահի տեղակալ - Արտակ Թևոսյան
- 11:55 Ընկերության 2017թ. ֆինանսական գործունեության ստուգման համար  
աուդիտորական կազմակերպության ներկայացում  
Ներկայացում – ֆինանսատնտեսական բաժնի պետ – Մանյա Սարգսյան
- 12:00 «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2016 թվականի գործունեության արդյունքներով առաջարկվող  
տարեկան շահութաբաժինների համամասնությունները և տարեկան  
շահութաբաժինների չափի որոշման նախագծի ներկայացում  
Ելույթ – Տնօրենների խորհրդի նախագահ – Սպարտակ Թևոսյան
- 12:05 Ընկերության տնօրենների խորհրդի նոր կազմի թեկնածուների ներկայացում  
Ներկայացում – Կորպորատիվ քարտուղար – Սերյոժա Մնացականյան
- 12:10 «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի անդամների ներկայացում  
Ներկայացում – ֆինբաժնի աշխատակից – Սրբուհի Ավետիսյան
- 12:15 «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի հաշվիչ հանձնաժողովի անդամների ներկայացում  
Ներկայացում – ֆինբաժնի աշխատակից – Լիլիթ Մինասյան
- 12:20 Քվեարկություն բոլոր հարցերով
- 12:25 Եզրափակիչ խոսք  
Ելույթ – Տնօրենների խորհրդի նախագահ – Սպարտակ Թևոսյան



«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017թ.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ  
ՕՐԱԿԱՐԳ

29.06.2017թ.

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում (գեկուցողներ - գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյան, տեխնիկական տնօրեն Արմեն Գասպարյան, ֆինանսական տնօրեն Ժան Հովհաննիսյան)
2. 2016թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում
3. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացում
4. Ընկերության 2017թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում
5. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2016 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունների հաստատում և շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի ընտրություն
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի հաշվիչ հանձնաժողովի ընտրություն



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

29.06.2017թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>		
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>		
Հիմնական միջոցներ	16,504,343	16,162,979
Ոչ նյութական ակտիվներ	-	18
Հետաձգված հարկային ակտիվներ	1,574	3,472
Տրված կանխավճարներ	39,000	167,000
	<b>16,544,917</b>	<b>16,333,469</b>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>		
Պաշարներ	79,926	89,845
Շահութահարկի կանխավճար	-	4,061
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,041,407	1,269,919
Տրված փոխառություններ	733,940	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	72,454	535,306
	<b>1,927,727</b>	<b>1,899,131</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>18,472,644</b>	<b>18,232,600</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		
<i>Կապիտալ և պահուստներ</i>		
Կանոնադրական կապիտալ	10,650,000	10,650,000
Էմիսիոն եկամուտ	457,127	457,127
Պահուստային կապիտալ	249,731	208,069
Կուտակված շահույթ	2,509,460	1,520,254
	<b>13,866,318</b>	<b>12,835,450</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Վարկեր և փոխառություններ	4,280,465	3,710,504
	<b>4,280,465</b>	<b>3,710,504</b>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Վարկեր և փոխառություններ	82,840	1,540,838
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	158,702	145,808
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	84,319	-
	<b>325,861</b>	<b>1,686,646</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>18,472,644</b>	<b>18,232,600</b>



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

29.06.2017թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	3,644,111	2,612,997
Ինքնարժեք	(783,007)	(766,954)
Համախառն շահույթ	2,861,104	1,846,043
Այլ եկամուտ	19,268	6,450
Իրացման ծախսեր	(2,679)	(2,407)
Վարչական ծախսեր	(288,699)	(273,464)
Այլ ծախսեր	(48,759)	(75,955)
Գործառնական գործունեությունից շահույթ	2,540,235	1,500,667
Այլ ֆինանսական հոդվածներ	7,962	(11,337)
Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ	(451,130)	(430,996)
Շահույթ մինչև հարկերը	2,097,067	1,058,334
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	(214,199)	(117,637)
Տարվա շահույթ	1,882,868	940,697
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	1,882,868	940,697



## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### *Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

### *Աուդիտորի պատասխանատվություն*

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև՝ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

*Հանգամանքների լուսաբանում*

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, հիմնված են Ընկերության 31 դեկտեմբերի 2015թ.-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 03 փետրվարի 2016թ. եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք:

07 մարտի 2017թ.

Սերգեյ Ասատրյան

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն

Առաջադրանքի ղեկավար

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ



## «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

### Վերստուգող հանձնաժողովի եզրակացություն

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին

«Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք վերստուգման ենք ենթարկել «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրություններ:

### Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Համաձայն Միջազգային Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշգրիտ ներկայացման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Այդ պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական թերություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում:

### Վերստուգող հանձնաժողովի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված վերստուգման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերստուգման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել վերստուգման ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:

### Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը 2016թ. դեկտեմբերի 31-ի ավարտական տարվա համար:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Վերստուգող հանձնաժողովի նախագահ

Ա. Պետրոսյան

20.03.2017թ.



**«ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

29.06.2017թ

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ**

**ՍՊՈՐՏԱԿ ԹԵՎՈՍՅԱՆ** – ծնվել է 1949թ. Լեռնային Ղարաբաղում: ԱՀ ֆինանսների նախարար: 2010 թվականից առ այսօր հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ և նախագահ:

**ՐԱՖՖԻ ԲԱԼՅՈՋՅԱՆ** – ծնվել է 1983թ. Ֆրանսիայում, Վարկային վերլուծաբան: Հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ 2012 թվականից առ այսօր:

**ՀԱՅԿ ԲՈՅԱԶՅԱՆ** – ծնվել է 1979թ. Հայաստանի Հանրապետությունում: Աշխատում է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ում, որպես պորտֆելի ավագ կառավարիչ: 2013 թվականից առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է:

**ԱՐԱ ՂՈՆՅԱՆ** – ծնվել է 1977թ. Հայաստանի Հանրապետությունում: Զբաղեցնում է Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ի Իրավապայմանագրային Ծառայության պետի պաշտոնը: 2013 թվականից առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է:

**ԿԱՐԵՆ ԱՐԱԲՅԱՆ** – ծնվել է 1977թ., Հայաստանի Հանրապետությունում: Հանդիսանում է «Ամբեր կապիտալ» ՓԲԸ-ի տնօրեն: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է 2012 թվականից:

**ՎԱՀՐԱՄ ԲԵԳԱՐՅԱՆ** – ծնվել է 1976թ., Լեռնային Ղարաբաղում: Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնում: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է 2009 թվականից:

**ՎԱԼԴԻՍԻՐ ՇԵՎՈՅԱՆ** – ծնվել է 1965թ. Հայաստանի Հանրապետությունում: Գլխավորում է Սիջազգային ֆինանսա-տնտեսագիտական և ինվեստիցիոն ծառայություններ տրամադրող ընկերությունը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է ԱՄՆ-ում և բաժանմունքներն գործում են վեց երկրներում: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում որպես խորհրդի անդամ առաջադրվում է առաջին անգամ:





**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

29.06.2017թ

**ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ**

**Պետրոսյան Արթուր Շահենի** – ծնվել է 1977թ.: Աշխատում է ԱՀ կառավարությունում որպես աշխատակազմի ղեկավար նախարարի տեղակալ:

**Պատվականյան Արթուր Էդուարդի** – ծնվել է 1968թ.: Աշխատում է «Արցախբանկ» ՓԲԸ-ի կանխիկի կառավարման բաժնում որպես վերահսկող:

**Ասատրյան Գեղամ Կարենի** – ծնվել է 1986թ.: Աշխատում է Պետական գնումների գործընթացի կարգավորման բաժնում որպես վերահսկող:

Վերստուգող հանձնաժողովն ընտրվում է 3 տարի ժամկետով:



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

29.06.2017թ

**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ**

**Հովհաննիսյան Ժան Ռուդիկի** (Հաշվիչ հանձնաժողովի նախագահ) – ծնվել է 1980թ.: Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում, որպես ֆինանսական տնօրեն:

**Շախունց Նանար Արամի** (Հաշվիչ հանձնաժողովի անդամ) – ծնվել է 1985թ.: Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում որպես ընդհանուր բաժնի պետ:

**Սարգսյան Մանյա Ալեքսեյի** (Հաշվիչ հանձնաժողովի անդամ) – ծնվել է 1988թ.: Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում որպես ֆինանսատնտեսական բաժնի պետ:

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվում է 3 տարի ժամկետով:



«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

29.06.2017թ

2016 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով շահույթի բաշխում

	Հազ. ՀՀ դրամ
Ընդամենը շահույթ որից`	1.882.868
հատկացումներ գլխավոր պահուստ	94.144
շահաբաժիններ	1.065.000
չբաշխված շահույթ	723.724